«ՊԱՇՏՊԱՆԻՐ ՋՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԷԿՈԼՈՒՐ» ՀԿ-Ի ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարոնիկ համայնք

Համայնքի վարչական տարածքի մակերեսը կազմում 10,50ք/կմ: Ծովի մակարդակից բարձր է 850մ: Բնակչության թիվը 2278 մարդ, տնային տնտեսությունների թիվը՝ 443: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսություն է: Ունի միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, բուժկետ:

Տարոնիկ համայնքում կենցաղային նպատակներով ջրհորներից օգտվել հնարավոր է, բայց խմելու համար ջուրը կա՛մ հարևան գյուղերից են բերում, կա՛մ գնում:

Նկ.1 Տարոնիկ համայնք

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում է որպես վարելահող՝ զբաղեցնելով մոտ 231հա: Տարոնիկ համայնքի վարչական տարածքը կազմում է 1050,47 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 812,96 հա, որից քաղաքացիների սեփականության հողեր 547,93 հա, համայնքային սեփականության հողեր՝ 139,0 հա: Արոտավայրերը զբաղեցնում են 41 հա:

Հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման և խմելու ջրի խնդիրը: Ջրի բացակայության պատճառով համայնքի ոռոգելի տարածքների ավելի քան 55 հա-ն այսօր չի մշակվում: Համայնքը չունի կոյուղու համակարգ:

Տարոնիկի համայնքապետարանը «Վերջին օրերի սրբերի կազմակերպության» աջակցությամբ Տարոնիկում իրականացրել է 6 կմ երկարությամբ խմելու ջրի խողովակաշարի կառուցում: Ըստ համայնքապետարանի աշխատակիցների՝ 85 մ խորությամբ հոր են հորատել, որից ջուրը խողովակներով հոսում է և ջրով ապահովում համայնքի մինչև 20-30%-ին: Ըստ համայնքապետարանի աշխատակիցների հավաստիացման՝ նոր խորքային հորից մատակարարվող ջուրը համապատասխանում է խմելու ջրի որակի ստանդարտին, որը հաստատող փաստաթուղթ ԷկոԼուրի թիմին չներկայացվեց:

Ծրագրի «Հանդիպումներ բնակիչների հետ՝ խնդիրները լսելու և լուսաբանելու, հարցաթերթիկի լրացման համար» 1.1 բաղադրիչի շրջանակներում «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի աշխատանքային խմբի՝ համայնքի բնակիչների հետ կայացած հանդիպման արդյունքում լրացվել է ջրի իրավունքի հետ կապված 19 հարցից կազմված 14 հարցաթերթիկ:

Հարցման նպատակն էր պարզել՝

- բնակիչների խմելու և ոռոգման ջրի իրավունքների խախտումների դեպքերը
- խմելու և ոռոգման ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու իրավունքների իրացման վիճակը

- ոռոգման ջրի մատակարար «Արմավիր» ՋՕԸ-ի աշխատանքների գնահատականը
- ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրության վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության աստիճանը
- բնակչության՝ ջրի իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը
- վերջին տարիներին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի նվազման պատճառներին վերաբերող բնակիչների գնահատականը
- ձկնային տնտեսությունների զարգացման վերաբերյալ բնակիչների մոտեցումները:

Հարցաթերթիկների վերլուծության արդյունքները

Անցկացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ բնակիչներն ունեն ջրի խնդիր, սակայն մեծ մասը չի ընկալում դա որպես ջրի նկատմամբ իրավունքի խախտում:

1. Ըստ հարցման արդյունքների՝ վերջին 10 տարում խախտվել են ջրի նկատմամբ իրավունքները /հարցվածների 71,44 %-ը/. դժվարացել են պատասխանել՝ 14,28 %-ը:



Նկ.2 Տարոնիկի բնակիչների՝ ջրի նկատմամբ իրավունքների պահպանման վիճակը

2. *Բնակիչները նշում են, որ խմելու ջրի հորերի մակարդակները կա՛մ իջել են, կա՛մ ցամաքել, ինչի արդյունքում իրենք խմելու ջուր չունեն: Ճիշտ է՝ վերջին շրջանում բարեգործական մի կազմակերպության կողմից փորվել է խմելու ջրի նոր արտեզյան հոր, անցկացվել ջրագիծ, ինչը բավարարում է բնակիչների 20-30%-ի խմելու ջրի պահանջարկը, սակայն նրանց մի մասը պնդում է, որ այդ ջուրը հնարավոր չէ խմել, քանի որ այն պիտանի չէ խմելու համար:*

3. *Որպես ջրի նկատմամբ իրավունքների խախտման դրսևորումներ բնակիչները նշում են տարբեր հանգամանքներ:*



Նկ. 3 «Ինչով է արտահայտվել ջրի Ձեր իրավունքի խախտումը» հարցին բնակիչների տված պատասխանների բաշխվածությունը

4. Հարցվածների տված պատասխանների համաձայն՝ նախկինում օգտագործվող հորերի ցամաքելու /50 %/ կամ իջնելու /50 %/ հետևանքով իրենք զրկվել են խմելու համար բավարար քանակի ջուր ունենալու իրավունքից:

5. Հարցվածների *45,93* %-ի համաձայն՝ իրենք զրկվել են կոմունալ-կենցաղային կարիքների բավարարման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջուր ստանալու իրավունքից:

6. 29,7 %-ը կարծում է, որ զրկվել են աշխատանքի և սեփական ապրուստի եկամուտներ ունենալու իրավունքից, քանի որ մշակովի հողատարածքների ոռոգման համար անհրաժեշտ որակի և քանակի ջուրը չի բավարարում:

7. Չնայած նրան, որ հարցվածների 50%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ ծանոթ է ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրությանը, այնուամենայնիվ, դրական պատասխան տվողներից ոչ-ոք չի կարողացել նշել կարգավորող նորմատիվ ակտերի ամբողջականությունը:



Նկ. 4 Ջրի վերաբերյալ օրենսդրության իմացության պատկերը Տարոնիկ համայնքում

8. 100 %-ը կարծում է, որ ջրի սակավությունը և խորքային հորերի ցամաքելու պատճառը պայմանավորված է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի՝ ձկնաբուծության նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործմամբ։

9. *Ըստ հարցման արդյունքների՝ ոռոգման ջրի սակավության պատճառով վերջին 10 տարում բոլորն են ունեցել եկամուտների զգալի կորուստներ, հատկապես բանջարանոցների սակավաջրման հետևանքով բանջարանոցային կուլտուրաների իրացումից ստացվող եկամտի մասով /72,72 %/։ Եկամուտների կորուստը հարցվածների 18,19 %-ի կարծիքով պայմանավորված է հողերի որակի փոփոխման հետևանքով որոշ մշակովի տեսակների կորստի և դրանց իրացումից ստացվող եկամտի մասով։ Հարցվածներից 5-ը հայտնեցին, որ ոռոգման ջրի սակավության պատճառով ստիպված են եղել չմշակել գումարային 15,13 հա մակերեսով գյուղատնտեսական հողեր։*



Նկ. 5 Վերջին 10 տարում բնակիչների եկամուտների կորստի հիմքերը

10. Բնակիչների 42,96 %-ի կարծիքով՝ ոռոգման ջրի մատակարար «Արմավիր» ՋՕԸ-ն ոռոգման ջուրը բաշխում է անարդարացի, 42,86-%-ը կարծում է, որ բաշխումն արդարացի է: 100%-ը հայտատարեց, որ «Արմավիր» ՋՕԸ-ն չի ապահովել ջրի հաշվառքի սարքերով իրենց ոռոգելի տարածքների գլխամասը, հետևապես այդ սարքի ստուգաչափման, ցուցմունքի գրանցման, ժամանակավորապես չաշխատելու դեպքում դրա կապարակնքման պայմանի մասին բնակիչներն իրազեկված չէին:



Նկ.6 «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից ոռոգման ջրի բաշխման գնահատականն ըստ հարցվածների

11. Հողօգտագործողները ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը ստորագրել են՝ առանց դրանում ամրագրված պայմաններին ծանոթանալու: Ոռոգման ջրի մատակարարման պահանջարկի գրավոր հայտ ընդհանրապես չի ներկայացվում:

12. Ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հարցում բնակիչների վերաբերունքն ակտիվ չէ: Իրենց այդ իրավունքի իրացման

նպատակով երբևէ չի օգտվել հարցվածների 35,72 %-ը, 38,71 %-ին չեն տրամադրվել պահանջվող տեղեկատվությունը իսկ 35,72 %-ը նշում է, որ միշտ ստացել են անհրաժեշտ տեղեկատվությունը:



Նկ. 7 ***Ջրի վերաբերյալ Տարոնիկ համայնքի բնակիչների տեղեկատվություն պահանջելու և ստանալու իրավունքի իրացման պատկերը***

13. *Չնայած նրան, որ հարցման բոլոր մասնակիցները պատասխանել են, որ գիտեն ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում կեղտաջրերով հողերի ոռոգման արգելքի մասին, այնուամենայնիվ, 58,33%-ը երբեմն կամ միշտ իրենց հողատարածքները ոռոգում են ոչ մաքուր ջրերով:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հարցման արդյունքների բացահայտումների հիման վրա կարելի է եզրակացություն անել, որ Տարոնիկ համայնքում խախտվել են՝

1. Բնակչի կյանքի և անվտանգության համար համապատասխան որակի և քանակի խմելու ջուր ունենալու իրավունքը:
2. Տարածաշրջանին առանձնահատուկ գյուղատնտեսությամբ զբաղվելու բնակչի աշխատանքի իրավունքը՝ դրա համար համապատասխան որակի և քանակի ոռոգման ջուր չունենալու հետևանքով:

3. Ջրային ոլորտում բնակչի տեղեկատվություն ստանալու իրավունքը:
4. Ջրային ոլորտում որոշումների կայացման մեջ մասնակցություն ունենալու իրավունքը:
5. «Արմավիր» ՋՕԸ-ի հետ կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրային իրավունքները:

Սույն հաշվետվությունը կազմվել է «Պաշտպանիր ջրի նկատմամբ քո իրավունքը» ծրագրի շրջանակներում Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության միջոցով, որի ընթացքում արտահայտված տեսակետները կամ ներկայացված նյութերի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

2019թ.